նողոք: Քամին պողպատէ ակռաներ ունի. ձիւնը իջնում է խայթող մտրակները ձեռքին: Նաւը պառկել էր կատաղի այս մրրիկների մէջ սառած դիակի նման. դիշերները գայլերը եւ բորենիները գայիս պտտում էին նրա շուրջը եւ՝ խարուած՝ քերում էին նրա սառնիքներով ծածկուած երկաթէ կողքերը, արիւնում իրենց թաթերը, յետ քաշւում եւ ոռնում: Երբեք, աշխարհի ոչ մի նաւ այդպիսի արկածի չէր հանդիպել:

— Հայաստանը անողոք երկիր է:

— Դիւրին չի ենթարկւում նորաձեւութիւններին: Օտարի հետ հիւրընկալ չէ: Նա ունի իր ներքին, անփոփոխելի օրէնքները, որոնց դէմ թոյլ չի տալիս, որ մեղանչեն: Պատժում է անողոք կերպով, քարէ իր մատների տակ ամէն ինչ ճզմում է, ոչնչացնում եւ քամիներին յանձնում:

— Հին երկիր է:

— Հին երկիր է, որին հասկանում են գիւղացիները եւ մանաւանդ հովիւները:

— Եւ այդպէս, ձիւնի եւ անձրեւի տակ ծեծուած, խեղճ նաւը պառկեց ամայի այս վայրերում վեց ամիս:

— Վեց ամի՞ս:

— Այո՛: Այդպէս, քիթը ժայռին տուած, ետեւի պտուտակը քամիների դէմ, փորը ներս ընկած, դժբախտ այդ մեքենան մարտիրոսացաւ, տանջուեց, չարչարուեց գաղտնի իր վարդապետութեան առաքելական ճանապարհի վրայ: Երբեմն նաւապետը գալիս էր, խլում էր՝ մինչ ծունկերը ձիւնի մէջ, չօշափում էր սառած դիակը, մտածում էր, չափում էր եւ գլուխը վար գցած հեռանում էր: Գարնան առաջի անձրեւներին, ձիւնը սկսեց հալուել եւ նաւը, որ ժամանակին ճերմակ էր, տեղ տեղ դեղնած, տեղ տեղ ժանգոտած, արեւի առաջի ճառագայթների տակ կարծես հոգի առաւ: Բոյնից վար ընկած, անփետուր, հսկայ մի ճնճղուկի էր նմանում: Ծիծաղելի եւ տխուր տեսք ունէր: Միամիտ եւ անպաշտպան: Ծրխնելոյզի շուրջը ծիծեռնակներ էին պտտում: Մէկը սկսել էր բոյն շինել: Վարի կամրջակի տակ, չգիտես որտեղից եկած մի կատու, դեռեղել էր իր նորածին փոքրիկները: Անցնող կովերը սիրում էին կանգ առնել նաւի մօտ եւ գլուխները քսել երկաթներին: Միակ կենդանիները, որ նրան չէին սիրում, հովիւների բարկացոտ շուներն էին. հեռւում կանգնում էին եւ սկսում հաչել:

Սեւցած, մաշուած այդ բեկորը, միջավայրին պատշաճելով, կարծես սկսել էր նոր մի կեանք: Ամայի լեռների մօտ, լուակեաց եւ կիսաքանդ ճանապարհի ծայրին պառկած, նա եկել էր վկայելու փոթորիկների յիշատակը, լեռների եռեւ տեղի ունեցող բարդ լինելիութիւնը: Պարապը պատճառ էր, որ աստուածները ստեղծագործեն: Կամրջի վրայ խոտը սկսել էր բուսնել, ծխնելոյզի տակ մամուռը թաղնուած սերմեր էր ծածկել, եւ երկաթէ պատերի շուրջը արեւը հողի հետ խառնուած նոր բուսականութեան հետ սկսել էր բաբախել, երբ յանկարծ, նաւապետը՝ աւելի քան երբեք յամառ՝ եկաւ մի խումբ մարդկանց հետ եւ սկսաւ փորել: Ու նորից տասներկու զոյգ եղներ, ճռռան անիւներ, հառայ հուրայ...

Նաւը վեր հանեցին եւ տարին: Ծիծեռնակները որոշ ժամանակ ետեւից եկան, բայց վերջ ի վերջոյ, յուսահատուած վերադարձան: Կատուն իր ձագերի հետ պատսպարուեց մի ժայռի տակ. միայն շունները շարունակեցին բարկացած հաչել՝ մինչեւ որ նաւը տեղ հասաւ:

— Ուրեմն տե՞ղ հասաւ:

— Հասա՛ւ, ամիսներ յետոյ:

— «Լուկաչին» նաւն է, որ մեզ պիտի տանի Նոր-Բայազէտ:

— Իսկ նաւապե՞տը:

— Նաւապետն էլ այնտեղ է: Այլեւս հերոսացած՝ նա Սեւանայ լճի ափը ու տիրականն է, ադմիրալը, ծովային սպեցը: Իրականի մէջ խելքը գլխին մարդ է, շատ գործնական, հաշիւը իմացող: Աչնան մօտակայ գիւղերից կարագ է առնում եւ քաղաքում ծախում: Իր ծրագիրները ամբողջովին տնտեսական են, դրական, օգտակար:

— Երկու նաւերի այդ պատմութիւնը՝ Հայաստանի երկու հանրապետութիւնների պատմութիւնն է:

— Իսկապէս...

— Բեսարաբիայից եկած դալկահար, լուակեաց երիտասարդ այն սպան, մինակ, պատռուած իր կօշիկներով, լճի ափին շինում է

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան